23 մայիսի 2016 թ.
Ժամը 11:00 թիվ՝ 3

<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

<ՈՒԱԿ-ԲԸԱՇՁԲ-16/3> ծածկագրով գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ
/Բուժական գծով փոխտնորեն/ Վ. Շահսուվարյան
անդամներ –
/գլխ. հաշվապահի տեղակալ/ Շ. Անանյան
/անվտանգության ինժեներ/ Ս. Հայրապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի թիվ 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» / այսուհետև՝ Կարգ / 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

1. Հայտերի բացման մասին

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Շահսուվարյան

1. **<u>Ընդունել ի գիտություն որ՝</u>**

1.1 <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից 16.05.2016թ.-ին թիվ 01/10-84 գրությամբ, Հայաստանի հանրապետության Ֆինանսների նախարարություն կատարված հարցմանը (հարցման համառոտ բովանդակությունը շարադրված է սույն գնման ընթացակարգի թիվ 2 արձանագրության 9.1 կետում) ի պատասխան, ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.05.2016թ. թիվ 1/73-1/1487-16 գրությամբ հայտնել է՝ <<Գտնում ենք, որ վճարման պահանջագրում շահառուի վավերապայմանները՝ ՀՎՀՀ-ն, սպասարկող բանկի անվանումը և հշ. N-ն ենթակա են լրացման շահառուի կողմից, ինչով պայմանավորված հայտնում ենք, որ այդ վավերապայմանների՝ մասնակցի կողմից լրացված չլինելը չի կարող հիմք հանդիսանալ մասնակցի հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու համար>>: ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2016թ. թիվ 1/73-1/1487-16 գրությունը <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից ստացվել է 20.05.2016թ.-ին:

2. **Հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում ներառված փաստաթղթերի համապատասխանության և մերժված հայտերի մասին**

2.1 Հաշվի առնելով սույն արձանագրության 1.1 կետը գնահատող հանձնաժողովը որոշեց <<Բիդեք>> ՍՊԸ, <<Իշխանհատակ>> ՍՊԸ, <<Գոռտիգ>> ՍՊԸ <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ, <<Ագարակ>> ԲԲԸ, <<Նաիրիշին>> ԲԲԸ, <<ՄարտՇին>> ՍՊԸ, <<Բաղրամյանշին>> ԲԲԸ, <<Գագշին Քոմփնի>> ՍՊԸ, <<Ինտերեվրոս – Ագրոս>> ՍՊԸ, <<Տրանսունիվերսալ>> ՓԲԸ, <<Աննա 80>> ՍՊԸ, <<Վահրադյան Շին>> ՍՊԸ, <<Գեվ-Էլլ Պլաստ>> ՍՊԸ, <<Էլդոգար>> ՍՊԸ, <<Արալպլաստ>> ՍՊԸ, <<Արալպլաստ>> ՍՊԸ, <<Սմալա>> ՍՊԸ, <<Ինտերեվրոս-Ագրոս>> ՍՊԸ և <<Մավրիկար>> ՍՊԸ ընկերությունների, հայտերում ներառված փաստաթղթերը գնահատել որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան լրացված փաստաթղթեր.

Ընդունել որոշում՝ կողմ ***3 (երեք), դեմ 0 (զրո)***

2.2 Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով և հաշվի առնելով, որ.

- <<Արթմաշին>> ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնությանը կից վճարման պահանջագրում վճարողի ստորագրությունը և կնիքը դրված է շահառուի դաշտում
- <<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնությանը կից վճարման պահանջագրում լրացված չէ արժույթը
- <<Մենառուբ Սթար>> ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնությանը կից վճարման պահանջագրում լրացված չէ արժույթը և գնային առաջարկում բացակայում է

մման առարկային անվանումը և գումարը բառերով.

- <<Սասունասար>> ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնությանը կից վճարման պահանջագրում գնման ընթացակարգի ծածկագիրը ճիշտ լրացված չէ (Մասնակցի կողմից լրացված ծածկագիրը՝ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/3)
- <<Եվրոստան-Ույուտ>> ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնությանը կից վճարման պահանջագրում լրացված չէ արժույթը.

Գնահատող հանձնաժողովը **ՈՐՈՇԵՑ՝** մերժել <<Արթմաշին>> ՍՊԸ, <<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ , <<Մենառուբ Սթար>> ՍՊԸ, <<Սասունասար>> ՍՊԸ և <<Եվրոստան-Ույուտ>> ՍՊԸ ընկերությունների՝ սույն գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով, ներկայացված հայտերը.

Ընդունել որոշում՝ կողմ ***3 (երեք), դեմ 0 (զրո)***

3. **<u>Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին՝</u>**

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.

4. **<u>Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին՝</u>**

4.1 Բողոքներ չեն եղել:

5. **<u>Հակաօրինական գործողությունների հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին՝</u>**

5.1 Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել

6. **<u>Կազմակերպված բանակցությունների մասին՝</u>**

6.1 Բանակցություններ չեն կազմակերպվել:

7. **<u>Գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ</u>**

7.1 Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց՝ գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր ներկայացրած Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները և հանձնաժողովը նախապատվությունը տալով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցներին,

կողմ ***3 (երեք), դեմ 0 (զրո)*** ձայներով Որոշեց՝

գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Արալպլաստ>> ՍՊԸ-ին

գնման ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԷԼ ԴՈԳԱՐ>> ՍՊԸ-ին

գնման ընթացակարգի երրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Գեվ-Էլլ Պլաստ>> ՍՊԸ-ին

8. **<u>Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին</u>**

8.1 Գնման ընթացակարգի հրավերով սահմանված Մասնակիցների որակավորման չափանիշների գնահատման արդյունքների հրապարակման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի մայիսի 31-ի ժամը 15^{00}-ին: Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղարին Կարգի 47-րդ կետի դրույթներին համաձայն՝

- Կատարել հարցում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև գնման ընթացակարգի հրավերով սահմանված <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
- Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գնման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքների անվանումները և տեխիկական բնութագրերը:
- Հաշվի առնելով, որ <<Արալպլաստ>> ՍՊԸ-ի կողմից գնման առարկա հանդիսացող աշխատանքների կատարման համար առաջարկված գինը ցածր է գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից, առառաջարկել <<Արալպլաստ>> ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ՝ իր կողմից առաջարկված գնի վերաբերյալ:

Ընդունել որոշում կողմ ***3 (երեք)***, դեմ ***0 (զրո)*** ձայներով

Գնահատող հանձնաժողովի նախագահ
/Բուժական գծով փոխտնորեն/ Վ. Շահսուվարյան

անդամներ –
/գլխ. հաշվապահի տեղակալ/ Շ. Անանյան

/անվտանգության ինժեներ/ Ս. Հայրապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան